

ՄԵՐ ՄԱՍԻՆ

(«ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ»-Ի ԱՆՑԱԾ ՈՒՂԻՆ)

Հայ պարբերական մամուլի բազմադարյան պատմության մեջ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի «Պատմաբանասիրական հանդես»-ն (ՊԲՀ) իր ուրույն տեղն ունի: 61 տարի շարունակ, անցնելով գիտահետազոտական, գիտակազմակերպչական և գիտահրատարակչական բարդ ու դժվարին ուղի, պարբերականը դարձել է հայագիտության ամենահեղինակավոր հանդեսներից մեկը, գիտական կադրերի պատրաստման հայտնի դարբնոց, հաջողությամբ իրականացրել է իր առջև դրված բազմաբովանդակ խնդիրները:

1950-ական թվականների կեսերից Խորհրդային Միությունում սկսված քաղաքական ձևափոխումները, նախորդ տասնամյակներում սկիզբ առած տնտեսության աճը, ժողովրդի ընդհանուր մակարդակի վերելքը՝ դպրոցների, բարձրագույն ուսումնական հաստատությունների, գիտահետազոտական հիմնարկների լայն ցանցի ստեղծումը, նպաստավոր պայմաններ էին ապահովում գիտությունների, այդ թվում նաև հայագիտության առաջընթացի համար: Պատմաքաղաքական նման բարենպաստ պայմաններում միայն հնարավոր դարձավ 1958 թ. իրագործել հայագիտական նոր պարբերականի հիմնադրումը՝ Հայաստանի գիտությունների ակադեմիայի ղեկավարության և անվանի հայագետների ջանքերով:

Հայաստանի ԳԱ նախագահության որոշմամբ ստեղծված պարբերականի խմբագրական կոլեգիայի կազմի մեջ ընդգրկվեցին նշանավոր պատմաբաններ ու բանասերներ Աշ. Հովհաննիսյանը, Ս. Երեմյանը, Լ. Խաչիկյանը, Բ. Առաքելյանը, Ա. Ղարիբյանը, Ս. Արևշատյանը և այլք: Հանդեսի գլխավոր խմբագիր նշանակվեց անվանի պատմաբան, ակադեմիայի փոխնախագահ, ակադեմիկոս Մ. Ներսիսյանը, որը շուրջ 40 տարի անընդմեջ ղեկավարեց հանդեսի աշխատանքները: Հետագա տարիներին հանդեսի խմբագրական կոլեգիայի կազմը համալրվում ու թարմացվում է նոր անդամներով՝ հայագետներով ու արևելագետներով՝ Բ. Պիտրովսկի, Ի. Աբուլաձե, Վ. Բընըցյանու, Ա. Ղանալանյան, Կ. Ղաֆադարյան, Գ. Ջահուկյան, Էդ. Ջրբաշյան, Գ. Սարգսյան, Գ. Բրուտյան, Էմ. Պիվազյան, Հր. Բարթիկյան և ուրիշներ: Հանդեսի հիմնադիր և գլխավոր խմբագիր Մ. Ներսիսյանի մահից հետո այդ պաշտոնը 1999 թ. վստահվեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, նշանավոր հայագետ Վ. Միքայելյանին: Վերջինիս մահից հետո՝ 2005 թ., հանդեսի մեկ համար լույս է տեսել պ. գ. դ. Պ. Մուրադյանի, մեկն էլ՝ Հանդեսի գլխավոր խմբագրի տեղակալ, պատասխանատու քարտուղար, բ. գ. դ. Ա. Ջաքարյանի խմբագրությամբ: 2006 թ. հանդեսի գլխավոր խմբագիր է ընտրվել ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, հայտնի բանագետ-բանասեր Ս. Հարությունյանը:

2018 թ. հունիսի 13-ին ՀՀ ԳԱԱ նախագահությունը ՊԲՀ-ի խմբագրական խորհրդի նախագահ նշանակեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ա. Մելքոնյանին, իսկ գլխավոր խմբագիր՝ բ. գ. դ. Ա. Ջաքարյանին:

Հանդեսի առաջին համարից ձևավորված և տարիներ ի վեր նույնությամբ պահպանված բովանդակային կառուցվածքը՝ բաժիններն ու ենթաբաժինները («Հոդվածներ», «Հաղորդումներ», «Բանավեճեր», «Պատմամշակութային ակնարկներ», «Հրապարակումներ», «Գրախոսություններ», «Միջուռքահայ կյանք», «Մեր հոբելյանները», «Լրատու», «Գիտական ինֆորմացիա»), հետագայում ենթարկվել է որոշ լրացումների ու ճշգրտումների:

Պարբերականում նյութերը հրատարակվում են հայերեն և ռուսերեն՝ համապատասխան լեզուներով ամփոփումներով: Հետագայում դրանց կցվեցին անգլերեն լեզվով ամփոփումներ, որի շնորհիվ այդ նյութերի ընդհանուր բովանդակությունը մատչելի է դարձել օտարալեզու ընթերցողներին: 1500-2400 տպաքանակով երկլեզու պարբերականը հիմնադրման օրից տարածվում է ոչ միայն Հայաստանում, այլև նրա սահմաններից դուրս: Այսօր թեև նվազել է հանդեսի տպաքանակը (250 օրինակ), սակայն ինչպես և անցյալում հասնում է իր ընթերցողներին աշխարհի տարբեր ծագերում: Ի դեպ, մինչև 1990 թ. տարեկան հրատարակվել է հանդեսի 4 համար, 1991-1997 թթ.՝ 1 կամ 2 համար, մինչև 2000 թ. եղել են միացյալ համարներ, իսկ 2000 թ. ՊԲՀ-ն եռամսյայից վերածվեց քառամսյա հանդեսի, և առ այսօր տարեկան հրատարակվում է 3 համար:

61 տարիների ընթացքում լույս է տեսել «Պատմաբանասիրական հանդես»-ի 211 մեծադիր համար՝ յուրաքանչյուրը 15-20 մամուլ ծավալով, միջին հաշվով ամեն համարում զետեղվել է 25 անուն նյութ, այսինքն՝ իր գոյության ընթացքում այստեղ տպագրվել է շուրջ 5.800 տպագիր միավոր:

1983 թ. հայերեն և ռուսերեն, իսկ 2009 թ. հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով լույս են տեսել ՊԲՀ-ի 1958-1982 և 1983-2007 թթ. մատենագիտական ցանկերը: Ցանկերում թվարկված հրապարակումների քանակը՝ համապատասխանաբար՝ 2828 և 1909 միավոր, ներկայացնում է կես դարի ընթացքում հայագիտական և դրան ադերսվող գիտական այլ բնագավառների զարգացման ուղղություններն ու գիտահետազոտական գործընթացները:

Ի դեպ, ՊԲՀ-ի 1983-2007 թթ. մատենագիտական ցանկը տպագրվել է «Գալուստ Գյուլբենկյան հիմնադրամ»-ի միջոցներով (հայկական բաժանմունքի ղեկավար՝ ՀՀ ԳԱԱ պատվավոր դոկտոր Զ. Եկավյան):

ՊԲՀ-ի էջերում հայ և այլազգի մասնագետների կողմից հայերեն ու ռուսերեն հրատարակվել են հոդվածներ, հաղորդումներ և գիտատեղեկատվական նյութեր, որոնք վերաբերում են հայ ժողովրդի տարբեր դարաշրջանների պատմության, գրականության, լեզվի, հնագիտության, վիճակագրության, բանասիրության, ազգագրության, փիլիսոփայության, իրավունքի, արվեստների, ճարտարապետության ամենատարբեր խնդիրների քննությանը, ինչպես նաև Հայաստանում, Միջուռքում և արտասահմանում կատարված գիտական ու մշակութային կարևոր իրադարձություններին, հայագիտական հրատարակություններին: Այն համակողմանիորեն լուսաբանել է նաև հայկական գաղթավայրերի պատմամշակութային կյանքը: Այս ամենը զուգակցվել է հարևան երկրների ու ժողովուրդների հետ ունեցած փոխառնչություններով և կապերով: Հանդեսը ծանրակշիռ ներդրում ունի արևելագիտական, կովկասագիտական, բյուզանդագիտական ուսումնասիրությունների ասպարեզում:

Ընդհանուր մշակութաբանական և պատմաբանասիրական հետաքրքրություններ կայացնող խնդիրները ևս մշտապես գտնվել են հանդեսի ուշադրության կենտրոնում, որով առավել ընդլայնվել է նրա գիտական տեսադաշտը՝ այն դարձնելով լայն ընդգրկումների պարբերական: Այս տեսակետից դարձյալ հարուստ են հրապարակումների, գրախոսությունների և գիտական տեղեկատվության բաժինները, ուր պարբերաբար հրատարակվում են գիտության և մշակույթի ականավոր դեմքերի անտիպ նամակներ, աշխատություններ, արխիվային տարբեր բնույթի վավերագրեր, աշխարհում հայագիտական, արևելագիտական և ընդհանուր մշակութաբանական արժեքներ կայացնող կարևոր հրատարակությունների մասին գրախոսականներ: Միանշանակ կարելի է արձանագրել, որ Հանդեսում տպագրված նյութերն առանձնանում են աղբյուրագիտական և պատմագիտական հարուստ ու բազմաշերտ հենքով:

Հանդեսի գործունեությանը տարբեր տարիների իրենց ակտիվ մասնակցությունն են բերել Անդրկովկասի, Ռուսաստանի, Ուկրաինայի, Մոլդովայի, Եվրոպայի, Մերձավոր և Միջին Արևելքի երկրների, Ամերիկայի հայ ու այլազգի բազմաթիվ գիտնականներ: Այսպես, օտարազգի գիտնականներից հանդեսին աշխատակցել են Բուլղարիայից Դ. Անգելովը, Վ. Գյուզելը, Չեխոսլովակիայից՝ Լ. Մոտալովան, Ռումինիայից՝ Վ. Բընըցյանուն (երկար տարիներ եղել է նաև խմբագրական կոլեգիայի անդամ), Իտալիայից՝ Ջ. Բոնֆանտեն, Վ. Պիզանին, Պ. Կունեոն, Ա. Ալպագո-Նովելլոն, Ֆրանսիայից՝ Ֆ. Ֆելդին, Ժ.-Պ. Մահեն, ԱՄՆ-ից՝ Ռ. Թոմսոնը, Ջ. Գրեյինը, Ռ. Յակոբսոնը, Հոլանդիայից՝ Ս. Մայքլը, Ս. Սթոունը, Բելգիայից՝ Ջ. Վայտենբերգը, Հունգարիայից՝ Է. Շյուցը, Ժ. Տրոչանին, Գերմանիայից՝ Հ. Վալտեր Պոլը, Ռուսաստանից՝ Վ. Տոպորովը, Օ. Շիրկովը, Տ. Իզմայլովան, Ա. Տերեշչենկոն, Ուկրաինայից՝ Ի. Կրիայակևիչը, Ն. Ռաշբան, Ս. Ավերբուխը, Ա. Ջինչենկոն, Ս. Յա. Դաշկևիչը, Վրաստանից՝ Ի. Աբուլաձեն (եղել է նաև խմբագրական կոլեգիայի անդամ), Դ. Չխիկիշվիլին, Գ. Մելիքիշվիլին, Հյուսիսայի Օսեթիա-Ալանիայի Հանրապետությունից՝ Վլ. Բեստովը, Իրանից՝ Ս. Մալեք Մոհամմեդին, Ա. Յահյամասիհին, Թուրքիայից՝ Բ. Բիլմեզը և շատ ուրիշներ: Պարբերականում հանդես են եկել նաև ինչպես Հայաստանի, այնպես էլ սփյուռքի գրեթե բոլոր հայ անվանի հայագետները: Հեղինակների նման մեծ ընդգրկումը մի կողմից վկայում է հանդեսի միջազգային լայն ճանաչման, մյուս կողմից՝ նրա գիտական բարձր վարկի ու հեղինակության մասին: Վերջինս իր արտահայտությունն է գտել նաև տարբեր երկրներից մեծահամբավ գիտնականների պարբերականի խմբագրությանը հղած նամակների բարձր գնահատականներում: Հանդեսի դերակատարությունը բարձր են գնահատել Հ. Օրբելին, Վ. Մինոբսկին (Լոնդոն), Կ. Մելիք-Օհանջանյանը, Հ. Սիրունին (Բուխարեստ), Հ. Արմենը, Հ. Շալյանը (ԱՄՆ), Վենետիկի ու Վիեննայի Մխիթարյանների ներկայացուցիչները և շատ ուրիշներ:

Ի մի բերելով «Պատմաբանասիրական հանդես»-ի անցած ավելի քան վեց տասնամյակների գործունեությունը՝ կարելի է վստահաբար արձանագրել. ՀՀ ԳԱԱ հայագիտական այս պարբերականն իր շուրջն է համախմբել մայր հայրենիքի և արտասահմանյան մեծաթիվ հայագետների, արդյունավետ աշխատանք է կատարել իր ծրագրային նպատակներն ու խնդիրներն իրագործելու համար: Այս առումով հատկապես գնահատելի է հանդեսի գիտակազմակերպչական նշանակությունը, քանզի պարբերականի խմբագրությունն (աշխատակիցների բազմամյա փորձ-

առությունը, հաստատուն ավանդույթները, հայագիտական նվաճումներն ընթերցող լայն հասարակությանը հավուր պատշաճի ներկայացնելու կարողությունը) անտրտունջ կազմակերպել, ընթացք և ուղղություն է տվել հայագիտական մտքի զարգացմանը: Բարձրագույն չի հնչի, եթե նշվի, որ հայագետների մի քանի սերունդներ իրենց ինքնահաստատումն են գտել հենց այս հանդեսի էջերում:

ՊԲՀ-ն դարձել է հայագիտական մեծահամբավ պարբերական և համընդհանուր ճանաչում ձեռք բերել մեր երկրում ու նրա սահմաններից դուրս: Անհնար է պատկերացնել հայագիտությունն առանց այս հանդեսի: Ներկայումս, անկախ պետականության պայմաններում, երբ հայագիտության հարզը Հայաստանի Հանրապետությունում խիստ բարձրացել և դարձել է պետական-քաղաքական ու ազգային անվտանգության կողմնորոշիչներից մեկը, կարծում ենք, պետք է ընթացք տալ նաև խմբագրության աշխատանքների նորոգ վերընթացին և բարոյական ու ֆինանսական առումով պետական հոգածությանը:

ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ
«Պատմաբանասիրական հանդես»-ի
խմբագրական խորհրդի նախագահ,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ
«Պատմաբանասիրական հանդես»-ի
գլխավոր խմբագիր, բանասիրական
գիտությունների դոկտոր